

### 9. Ժամանակավոր անաշխատունակություն, արտադրական դժբախտ պատահարներ և արտադրական վնասվածքներ

Ըստ հանրապետության կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2003թ. 95 աշխատողներ ստացել են տարբեր տեսակի մարմնական վնասվածքներ ու մեկ և ավելի օրով դարձել անաշխատունակ: 2002թ. համեմատ այդ ցուցանիշը նվազել է 13.6%-ով (2002թ.՝ 110 աշխատող): 1000 աշխատողի հաշվով (այս և հետագա հաշվարկներում աշխատողների թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.8, 2002թ. 0.7-ի դիմաց: Տուժածներից 4-ը կամ 4.2%-ը կանայք են: Աշխատանքի անվտանգության նորմերի խախտման հետևանքով տուժածների 28.4%-ը կամ 27 մարդ մահացել են, նրանցից 3.7%-ը կամ 1-ը՝ կին: Մահացության 6 դեպք արձանագրվել է Երևան քաղաքում, 9-ը՝ Սյունիքի, 4-ական՝ Գեղարքունիքի և Շիրակի, 2-ը՝ Կոտայքի, 1-ական՝ Արմավիրի և Տավուշի մարզերում:

#### Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը, 2000-2003թթ.

(մարդ)

		2000	2001	2002	2003
Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը	ընդամենը	72	95	110	95
	նրանցից՝ կանայք	2	8	2	4
նրանցից՝ մահացածներ	ընդամենը	17	16	15	27
	նրանցից՝ կանայք	-	-	-	1

2003թ. հանրապետությունում արձանագրված 92 դժբախտ պատահարներից 22-ը կամ 23.9%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին, 31 դեպք (33.7%)՝ Սյունիքի, 18 (19.6%)՝ Գեղարքունիքի, 10 (10.9%)՝ Կոտայքի, 4 (4.3%)՝ Շիրակի, 3 (3.3%)՝ Լոռու, 2 (2.2%)՝ Արարատի, 1-ական (1.1-ական տոկոս)՝ Արմավիրի և Տավուշի մարզերին: Ընդ որում, Երևան քաղաքում 1 դժբախտ պատահարի հետևանքով միաժամանակ տուժել է 3 մարդ:

Հանրապետությունում դժբախտ պատահարներից 3-ը տեղի է ունեցել աշխատանքի գնալու ճանապարհին, իսկ 2-ը՝ աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին, որի արդյունքում տուժել են համապատասխանաբար՝ 3 և 4 մարդ:

Դժբախտ պատահարների հետևանքով 2 մարդ դարձել է II, 4-ը՝ III խմբի հաշմանդամ: Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է 2003թ., անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 4.2 հազ. մարդ-օր (2002թ.՝ 3.8 հազ. մարդ-օր): 1 և ավելի աշխատանքային օրով հիմնական աշխատանքից այլ աշխատանքի է փոխադրվել աշխատունակությունը մասամբ կորցրած 1 մարդ:

**Աշխատանքային գործունեության ընթացքում վնասվածքներից տուժածների  
թվաքանակի բաշխվածությունն ըստ մարզերի, 2003թ.**

	Աշխատանքային գործունեության ընթացքում վնասվածքներից տուժածների թվաքանակը				նրանցից՝ մահացածներ			
	ընդամենը, մարդ	նրանցից՝ կանայք	% -ով ընդհանուրից		ընդամենը, մարդ	նրանցից՝ կանայք	% -ով ընդհանուրից	
			ընդամենը	նրանցից՝ կանայք			ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.երևան	23	3	24.2	75.0	6	1	22.2	100.0
Արագածոտն	-	-	-	-	-	-	-	-
Արարատ	2	-	2.1	-	-	-	-	-
Արմավիր	1	-	1.1	-	1	-	3.7	-
Գեղարքունիք	20	-	21.0	-	4	-	14.8	-
Լոռի	3	-	3.2	-	-	-	-	-
Կոտայք	10	-	10.5	-	2	-	7.5	-
Շիրակ	4	-	4.2	-	4	-	14.8	-
Սյունիք	31	1	32.6	25.0	9	-	33.3	-
Վայոց ձոր	-	-	-	-	-	-	-	-
Տավուշ	1	-	1.1	-	1	-	3.7	-
Ընդամենը ՀՀ	95	4	100.0	100.0	27	1	100.0	100.0

2003թ. հանրապետությունում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, որոնք տրվում են տուժողին կամ տուժողի մահվան դեպքում դրա իրավունքն ունեցող անձանց, կազմել են 602.7 մլն. դրամ, որից՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստներ՝ 8.4 մլն. դրամ, կորցրած աշխատավարձի փոխհատուցում՝ 155.7 մլն. դրամ, միանվագ նպաստներ՝ 2.3 մլն. դրամ, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր՝ 47.2 մլն. դրամ: Շարքից դուրս եկած սարքավորումների, գործիքների, քանդված շենքերի, շինությունների արժեքը կազմել է 1.5 մլն. դրամ: Դժբախտ պատահարներից տուժածների աշխատանքի չներկայանալու հետևանքով կազմակերպությունների կրած վնասը կազմել է 11.3 մլն. դրամ:

Աշխատանքի պահպանման կոլեկտիվ պայմանագրերի (համաձայնագրերի) համաձայն, աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը կազմել է 378.2 մլն. դրամ, որից հատուկ արտահագուստի ձեռք բերման համար՝ 157.4 մլն. դրամ, անհատական պաշտպանության միջոցառումների վրա՝ 144.6 մլն. դրամ:

Հավելված 9

Արտադրական դժբախտ պատահարները բնութագրող ցուցանիշները, 1994-2003թթ.

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Արտադրական դժբախտ պատահարների դեպքերի քանակը, միավոր	210	122	76	60	99	103	68	91	108	92
Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը, մարդ	210	122	76	54	99	255	72	95	110	95
Արտադրական դժբախտ պատահարներից մահացածների թվաքանակը, մարդ	15	15	11	10	9	5	17	16	15	27
Արտադրական դժբախտ պատահարներից հաշմանդամ դարձածների թվաքանակը, մարդ*	...	...	...	...	...	6	6	10	1	6

\* Արտադրությունում դժբախտ պատահարներից հաշմանդամ դարձածների հաշվառումը տարվում է 1999թ-ից:

Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակն ըստ մարզերի, 1999-2003թթ.

(մարդ)

		Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը		Արտադրական դժբախտ պատահարներից մահացածների թվաքանակը	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.երևան	1999	26	11	4	1
	2000	20	1	5	-
	2001	43	5	9	-
	2002	29	2	4	-
	2003	23	3	6	-
Արագածոտն	1999	-	-	-	-
	2000	4	-	1	-
	2001	1	-	-	-
	2002	1	-	-	-
	2003	-	-	-	-
Արարատ	1999	-	-	-	-
	2000	8	-	2	-
	2001	-	-	-	-
	2002	1	-	-	-
	2003	2	-	-	-
Արմավիր	1999	-	-	-	-
	2000	-	-	-	-
	2001	1	-	1	-
	2002	-	-	-	-
	2003	1	-	1	-
Գեղարքունիք	1999	53	18	-	-
	2000	-	-	-	-
	2001	2	-	1	-
	2002	-	-	-	-
	2003	20	-	4	-
Լոռի	1999	1	-	-	-
	2000	6	-	3	-
	2001	5	-	-	-
	2002	18	-	-	-
	2003	3	-	-	-
Կոտայք	1999	159	2	-	-
	2000	8	-	-	-
	2001	9	1	3	-
	2002	16	-	3	-
	2003	10	-	2	-

		Արտադրական դժբախտ պատահարներից տուժածների թվաքանակը		Արտադրական դժբախտ պատահարներից մահացածների թվաքանակը	
		ընդամենը	նրանցից` կանայք	ընդամենը	նրանցից` կանայք
Շիրակ	1999	2	1	-	-
	2000	3	-	2	-
	2001	3	-	1	-
	2002	13	-	2	-
	2003	4	-	4	1
Սյունիք	1999	14	-	1	-
	2000	23	1	4	-
	2001	30	2	1	-
	2002	32	-	6	-
	2003	31	1	9	-
Վայոց ձոր	1999	-	-	-	-
	2000	-	-	-	-
	2001	1	-	-	-
	2002	-	-	-	-
	2003	-	-	-	-
Տավուշ	1999	-	-	-	-
	2000	-	-	-	-
	2001	-	-	-	-
	2002	-	-	-	-
	2003	1	-	1	-
Ընդամենը ՀՀ	1999	255	32	5	1
	2000	72	2	17	-
	2001	95	8	16	-
	2002	110	2	15	-
	2003	95	4	27	1